


Ջրամատակարարում



Ջրամատակարարումը Շուշիի ամենահրատապ խնդիրներից է, որն է՛լ ավելի է վատթարացնում քաղաքում արդեն իսկ առկա բարդ կենցաղային պայմանները:

Անկախ այն հանգամանքից, որ քաղաքի բնակչությունն այսօր չորս անգամ ավելի քիչ է, քան խորհրդային շրջանի վերջին տարիներին, բնակչության ջրամատակարարումը խիստ նվազել է քաղաքը սնուցող ջրագծի և բաշխման ցանցի վթարային վիճակի պատճառով: Շուշիի շուրջօրյա անխափան ջրամատակարարման ապահովումը Հիմնադրամի առաջնային խնդիրներից է:



Հիմնադրամի պատվերով «Երևան Նախագիծ» ընկերությունն իրականացրել է Շուշի քաղաքի խմելու ջրի մատակարարման և կենցաղային ու հեղեղատար կոյուղիների ցանցերի ուրվագծման աշխատանքները:

Այս նախագիծը նախատեսում է ջրագծի և բաշխման ցանցի ամբողջական վերակառուցում. 7 հազար հոգի բնակչության համար նախատեսված համակարգի վերականգնման արդյունքում խնդրին կտրվի միջանկյալ լուծում:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է սկսել 2008թ. ամռանը: